



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2011

# 1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

## 1.1 Տարածքային զարգացման անհամամասնությունների մեղմում, մարզերի համար մարզային զարգացման ծրագրերի մշակում

Մշակվել է ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը: Փաստաթուղթը քննարկվել է ԵՄ և միջազգային այլ կառույցների փորձագետների, հասարակական, գիտական կազմակերպությունների հետ և ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Վերլուծվել են ՀՀ պետական բյուջեով և վարկային աղբյուրներով նախորդ տարիներին իրականացված և տվյալ տարվա համար նախատեսված կապիտալ ծախսերը քաղաքաշինության (կրթություն, առողջապահություն, մշակույթի սպորտի) և ենթակառուցվածքների (ճանապարհների, գազաֆիկացման, խմելու և ոռոգման ջրի) ոլորտներում՝ դիտարկվել է դրանց դինամիկան ըստ մարզերի և իրականացվել է համապատասխան վերլուծություն, ինչպես ընդհանուր ծավալի, այնպես էլ մեկ շնչի հաշվով: Նույն կտրվածքով վերլուծվել են նաև գյուղատնտեսության համար նախատեսված ծախսերը:

Վերլուծվել են նաև բոլոր աղբյուրներով 2005-2009թթ իրականացված կապիտալ ներդրումները, մասնավորապես՝ բնակչության, կազմակերպությունների, մարդասիրական օգնության և համայնքների միջոցների մասով:

Կազմվել են հինգ մարզերի զարգացման ծրագրեր, որոնք կառավարության կողմից արժանացել են հավանության, դրանով իսկ ամբողջականացվել է մարզերի զարգացման ծրագրերի կազմման գործընթացը:

Իրականացվել են ՀՀ կառավարության արտագնա նիստերի օրակարգերի ձևավորման աշխատանքները:

## 1.2 Տարածաշրջանային կայունության և անվտանգության ապահովման, սահմանամերձ համագործակցության զարգացման գործում Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակներում տարածաշրջանային վիճակագրական համակարգի ստեղծմանն օժանդակում և նպատակային ծրագրերի իրականացում

Տարածաշրջանային վիճակագրական համակարգի ստեղծման նպատակով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ Հայաստան - ԵՄ համագործակցության արդյունքում առաջին անգամ ՀՀ-ում մշակվել և ներդրվել են վիճակագրական տարածաշրջանային ցուցանիշներ (մարզային կտրվածքով):

# 2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

## 2.1 Տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացում

2010 թվականին ՀՀ մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 210 համայնքներում: Բացառությամբ ՀՀ Արարատի մարզի Այնթափ համայնքի (որտեղ առկա են եղել չիրականացնելու վերաբերյալ օրենսդրական հիմքեր) մնացած համայնքներում վարչական հսկողությունն իրականացվել է ամբողջությամբ:

Մարզպետի վարչական վերահսկողության աշխատանքային ծրագրերը համեմատվել են Վերահսկիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության աշխատանքային ծրագրերի հետ՝ բացառելու համար նույն համայնքներում նույն բնագավառում իրականացվող հսկողությունների կրկնությունները:

Մարզպետարանների կողմից իրականացված ստուգման արդյունքները հավաքագրվել են յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը:

Ներկայացված արդյունքների հիման վրա ստուգվել է իրականացված ստուգման համապատասխանությունը հաստատված տարեկան աշխատանքային ծրագրին և օրենսդրությամբ սահմանված բնագավառներին:

Ներկայացված ստուգման ակտերի հիման վրա կազմվել է եռամսյակային հաշվետվություն և տեղադրվել է նախարարության ինտերնետային կայք էջում:

Միաժամանակ հսկողություն է սահմանվել նաև արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված աշխատանքների նկատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել են վարչական հսկողություն իրականացնող մարզպետարանի աշխատակազմի ընդհանուր առմամբ 49 աշխատակիցներ:

2010 թվականի հունվարից սկսած ամփոփվել և նախարարության ինտերնետային կայք էջում տեղադրվել են նաև ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողության արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքների կողմից մարզպետարան են ներկայացվել թվով 55533 որոշում, որից ոչ իրավաչափ է համարվել 10534-ը (18.9 %): Ավագանու որոշումները սահմանված ժամկետում մարզպետարան չներկայացնելու պատճառով կարգապահական տույժի են ենթարկվել համայնքի ղեկավարի աշխատակազմի 10 քարտուղար:

## **2.2 Տարածքային կառավարման համակարգում բարեփոխումների իրականացում («ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նոր տարբերակի մշակում)**

2010թ. մշակվեց և գործադիր իշխանության հանրապետական մարմինների հետ քննարկումներից հետո ՀՀ կառավարությունը ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման մարմինների գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի նոր հրամանագրի նախագիծը:

Տարածքային կառավարման մարմիններում բարեփոխումներ իրականացնելու նպատակով նաև 2010 թվականին մարզպետի 2009 թվականի գործունեության գնահատման գործընթացում արձանագրված բացթողումները ու թերացումները նկատի ունենալով մշակվեց, շահագրգիռ մարմինների հետ քննարկվեց և ՀՀ կառավարությունը ներկայացվեց մարզպետներին գնահատման կարգում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը վերջինիս կողմից արժանացավ հավանության:

2010 թվականի առաջին անգամ իրականացվեց մարզպետների 2009 թվականի գործունեության արդյունքների գնահատում:

Տարածքային կառավարման մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների միասնականացման նպատակով մշակվել է նաև մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ու տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինների օրինակելի կանոնադրությունները:

Մշակված կանոնադրությունների հիման վրա իրականացվել են նաև փոփոխությունները ստորաբաժանումների պաշտոնների անձնագրերում:

## **2.3 ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման՝ ՀՀ ՏԿՆ-ի մասով միջոցառումների ծրագրի կատարման ապահովում**

1. Մշակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց և այն տրամադրվել է բոլոր համայնքներին (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 70.8. կետ):

2. Նախարարության մասնագետների կողմից ՀՀ մարզխորհուրդներում և համայնքներում կազմակերպվել են խորհրդակցություններ՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն առնչվող խնդիրների վերաբերյալ (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.1. կետ):

3. ՀՀ համայնքների 2010թ. բյուջեների կատարման և 2011թ. բյուջեների կազմման գործընթացների թափանցիկության և հրապարակայնության վերաբերյալ հարցերը քննարկվել են մարզխորհուրդների նիստերում, տեղերում ցուցաբերվել է խորհրդատվական օժանդակություն: Գործընթացի իրականացումը պարբերաբար ուսումնասիրվում է (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.2. կետ):

4. Համայնքների ղեկավարների ընդունելություններին մասնակցել է շուրջ 60000, իսկ ավագանու ընդունելություններին՝ շուրջ 22000 քաղաքացի (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.4. կետ):

5. Նախարարության կողմից իրականացվում է մոնիտորինգ՝ համայնքի սեփականություն համարվող գույքի սակարկությունների իրականացման գործընթացի հրապարակայնության և թափանցիկության նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում՝ տրվում են համապատասխան պարզաբանումներ (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.5. կետ):

6. Նախարարության կողմից մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, ինչը պայմանավորված է համայնքների ավագանիների կողմից Վերահսկիչ պալատի և այլ պետական մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների պարտադիր քննարկման պահանջի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությամբ: Օրինագիծը գտնվում է ՀՀ Ազգային ժողովում (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 73.4. կետ):

7. Նախարարության կողմից իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շինությունների մոնիտորինգ: Հանձնարարվել է մարզպետներին՝ իրավունքի պետական գրանցում չունեցող համայնքային սեփականություն համարվող վարչական շենքերի և շինությունների գրանցման գործընթացում աջակցել համայնքների ղեկավարներին (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 73.6. կետ):

8. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման 52 ծառայություններում տեղադրված են էլեկտրոնային կառավարման համակարգեր, գործառնություններն իրականացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալների էլեկտրոնային բանկերի կիրառմամբ (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 75.1. կետ):

9. Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստում են անցել 856 համայնքային ծառայողներ, 623 համայնքների ղեկավարներ և ավագանիների անդամներ, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների 49 աշխատակիցներ: Վերապատրաստման ծրագրերով այլ թեմաներից բացի նախատեսված են տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարչական հմտությունների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման համակարգում հակակոռուպցիոն հմտությունների վերաբերյալ առանձին թեմաներ (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 76.1., 89.1 և 90.1 կետեր):

10. Պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում մշակվել և ՀՀ 225 համայնքներում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ, որը ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող գործառնությունների ավտոմատացումը: ՀՀ 8 համայնքներում (Ապարան, Դիլիջան, Իջևան, Չարենցավան, Վեդի, Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր) ստեղծվել են քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցություն ապահովող քաղաքացիների սպասարկման գրասենյակներ: ՀՀ համայնքների և հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ «Համայնքների հանրապետական ասոցիացիա», «Համայնքների ֆինանսիստների միավորում», «Համայնքների ավագանիների ասոցիացիա») միջև իրականացվում է սերտ համագործակցություն՝ ՏԻՄ-երի գործունեության և լիազորությունները պատվիրակելու պրակտիկայի արմատավորման ու խթանման ուղղությամբ: Համագործակցելով ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում գործող կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ-ը», «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն-ը», ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերի մի շարք քաղաքներում կազմակերպվել են «Ցուցահանդեսներ անիվների վրա», որտեղ ներկայացվել են SS ոլորտի ձեռքբերումները: «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ-ի հետ համատեղ մշակվել են «Լավագույն մարզ SS ոլորտում մրցույթի անցկացման պայմանները, կազմվել են գնահատման չափորոշիչները: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ մշակվել է միջոցառումների ծրագիր ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ մարզպետարանների համար պաշտոնական նոր ինտերնետ կայքեր նախագծելու ուղղությամբ, մշակվել են կայքերի նախագծման տեխնիկական առաջադրանքները: (ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 70.7., 72.6. և 76.3. կետեր)

### 3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁևԱՎՈՐՈՒՄ

2011թ. հունվարի 1 - ի դրությամբ ՀՀ համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 85.016.111 հազար դրամի դիմաց կազմել են 83.832.695 հազար դրամ, (կատարողականը՝ 98.6%): 2009 թվականի համեմատությամբ ընդամենը եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 59.4 %-ով կամ 31.232.317 հազար դրամով: Երևան քաղաքին պետության պատվիրակած լիազորությունների իրականացման ծախսերի համար նախատեսված գումարը կազմում է՝ 19.739.237 հազ. դրամ: Առանց Երևան քաղաքին պետության պատվիրակած լիազորությունների իրականացման ծախսերի համար տրամադրված գումարների եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 20.6 %-ով կամ 1 0.816.118 հազար դրամով:

Սեփական եկամուտները կազմել են ընդամենը եկամուտների 37.5 %-ը /առանց պատվիրակած լիազորությունների/: Սեփական եկամուտները նախատեսված 24,916,941 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 23,827,488 հազար դրամ (կատարողականը՝ 95.6 %):

2009 թվականի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 9.9 %-ով կամ 2.140.111 հազար:

Գույքահարկի հավաքագրումը կատարվել է 102.5%-ով: Նախատեսված 10.991.979 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 11.266.962 հազար դրամ: 2009 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 9.8 %-ով կամ 1.005.221 հազար դրամով:

Հողի հարկի հավաքագրումը կատարվել է 93.9 %-ով: Նախատեսված 4.874.836 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4.575.090 հազար դրամ: 2009 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը նվազել է 7.7 %-ով կամ 379.685 հազար դրամով: Հողի հարկի հավաքագրման նվազման հիմնական պատճառը ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 14.5 տոկոս անկումն է:


Հարկային եկամուտները /գույքահարկ+հողի հարկ/ միասին կազմել են՝ 15.842.052 հազար դրամ: 2009 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 4.1 %-ով կամ 625,536 հազար դրամով:


Տեղական տուրքերի հավաքագրումը կատարվել է 112.9 %-ով: Նախատեսված 2.034.251 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2,297.597 հազար դրամ: 2009 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 42.8 %-ով կամ 688.326 հազար դրամով:

Պետական տուրքերի հավաքագրումը կատարվել է 99.3 %-ով: Նախատեսված 785.686 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 780.515 հազար դրամ: 2009թ. համեմատությամբ պետական տուրքերի հավաքագրման ցուցանիշը աճել է 6.3 %-ով, կամ 46.254.8 հազար դրամով:

Գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրումը կատարվել է 83.2 %-ով: Նախատեսված 2.584.563 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2.150.234 հազար դրամ: 2009թ. համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 12.8 %-ով կամ 244.382 հազար դրամով:

Աշխատավարձերի նախկին տարիների կուտակած պարտքերի մարման մասով արձանագրվել է հետևյալ արդյունքը, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ ձևակերպված շուրջ 2.3 մլրդ.դրամ պարտքերից այսօրվա դրությամբ առկա է 383 մլն.դրամ պարտք:





### 3.1 Ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրում

«Ֆինանսական համահարթեցման դոտացիաների մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի կիրարկման դեպքում հնարավոր արդյունքների վերաբերյալ կազմվել են մի քանի տարբերակներ դոտացիաների տարբերությունները լրացնելու ուղղությամբ:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որը 29.04.2009թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ, այժմ գտնվում է երկրորդ ընթերցման ռեժիմում:

Դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափը յուրաքանչյուր տարի սահմանվում է պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով:

2011թ. համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը որոշելու համար ձևավորված նվազագույն 4 տոկոսի սկզբունքը կիրառելու դեպքում, 2011 թ. դոտացիայի ընդհանուր գումարը / մոտ 28 մլրդ դրամ/ կպակասեր 2010թ. դոտացիայի ընդհանուր գումարի / մոտ 32,5 մլրդ դրամ/ համեմատությամբ:

2011թ. համար ՀՀ կառավարությունը որոշեց պահպանել համայնքներին համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիայի ընդհանուր գումարի չափը, թողնելով այն 2010թ. մակարդակին՝ 32,488,062.800 դրամ, որը նախորդ տարվա համախմբված բյուջեի փաստացի եկամուտների մոտ 4,6%-ն է: Այսինքն՝ վերջին տասը տարվա ընթացքում նվազագույն 4%-ի շեմը առաջին անգամ գերազանցվեց:

### Համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքագրման մեխանիզմների կատարելագործում, տեղական նոր հարկատեսակների ներմուծում

Ընդունվել են տեղական ինքնակառավարման մարմինների ռեսուրսային հնարավորությունների ընդարձակմանն ուղղված մի շարք օրենսդրական փաթեթներ, մասնավորապես՝ «Հարկերի մասին», «Բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքներ:

Այդ օրինագծերի համաձայն՝ բոլոր տեղական հարկերի հետ կապված վարչարարությունը (տեղական հարկերի տեսակների ու դրույքաչափերի սահմանումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող

եկամուտների հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը և վճարման նկատմամբ հսկողությունը) սահմանվում է որպես տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություն:

Համայնքին իրավունք է վերապահվում օրենքով սահմանված կարգով գնահատել և վերագնահատել անշարժ գույք հանդիսացող հարկվող օբյեկտի հարկման ենթակա բազան, իսկ անհամապատասխանության դեպքում արդյունքները ներկայացնել գնահատում և վերագնահատում իրականացնող լիազոր մարմնին կամ վիճարկել դատական կարգով: Համայնքին իրավունք է վերապահվում տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունները չկատարելու դեպքում սահմանված կարգով հայցադիմում ներկայացնել դատարան, իսկ վճարումը 183 օր ուշացնելու դեպքում դիմել դատարան սնանկ ճանաչելու հայցով: Տեղական հարկերից հողի հարկի և գույքահարկի կիրարկումը Հայաստանի բոլոր համայնքներում պարտադիր է, իսկ սույն օրենքի նախագծով նախատեսված մյուս (ոչ պարտադիր) տեղական հարկատեսակները կարող են կիրարկվել միայն յուրաքանչյուր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան որոշման արդյունքում:

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից (15.11.2010թ. N ՀՕ-172) համաձայն որի ձյունագնացը և մոտոամենագնացը ավելացվել են հարկման ենթակա օբյեկտների ցանկում:

2010 թվականին մշակվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծային փաթեթը:

2010 թվականին մշակվել է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով հստակ կամրագրվեն ավտոկայանատեղի կազմակերպման, դրանց շահագործման կարգերը, տեխնիկական միջոցներով կահավորման, ավտոկայանատեղի տուրքի վճարման օբյեկտները, տուրքի առավելագույն և նվազագույն չափը, տուրք վճարողները, վճարման համակարգը, ավտոկայանատեղի տուրք վճարողների իրավունքները և պարտականությունները, ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը, հսկողության իրականացման կարգը և ձևերը, բռնագանձման, պատասխանատվության կիրառման, տրանսպորտային միջոցների տարհանման կարգը, ինչպես նաև համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին հիշյալ ոլորտում վերապահվող լիազորությունները և մի շարք այլ դրույթներ: Օրինագիծը 2010 թվականի հոկտեմբերի 25-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային Ժողովի չորսօրյա նիստերի օրակարգ: 2010թ. մշակվել է «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2010 թվականի ընթացքում ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների հետ համատեղ մշակվեց և հունիսի 10-ին ընդունվեց «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը, որի ընդունման կարևորությունն ու հրատապությունը պայմանավորված էր «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի երկարաձգման անհրաժեշտությամբ: Համաձայն այդ օրենքի՝ «մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը (նախքան փոփոխությունը՝ 2009 թվականի դեկտեմբերի 31-ը) համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հաշվարկված հողի հարկի գումարները (մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) առանց հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարած ֆիզիկական անձինք ազատվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վճարումից:

Համայնքներում նախադպրոցական բնագավառում մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, այդ բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները հստակեցնելու նպատակով՝ մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Նախադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ համայնքներում արտոնների և խոտհարքների օգտագործելիության աստիճանի և կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է որոշում:

«Հայաստանի Հանրապետությունում պարտադիր հաշվառման ենթակա ջրային տրանսպորտային միջոցների ցանկը, կադաստրի վարման կարգը և հաշվառման մատյանի ձևը, պարտադիր հաշվառման ենթակա ձյունագնաց տրանսպորտային միջոցների կադաստրի վարման կարգը և հաշվառման մատյանի ձևը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1847-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի N 1678-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին որոշումների նախագծերը մշակվել և ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը:

Անհրաժեշտ վերլուծական և մեթոդական նյութեր են նախապատրաստվել անշարժ գույքի հարկման (միասնական հարկ) համակարգի անցման նպատակով:

Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման բարելավման և կատարելագործման առումով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- տարեսկզբին իրականացվել է համայնքային բյուջեների 2010թ պլանավորած ցուցանիշների (հատկապես գույքահարկի, հողի հարկի, տեղական և պետական տուրքերի և համայնքային գույքի վարձակալության) մանրակրկիտ վերլուծություն, որի արդյունքում բազմաթիվ համայնքներում ավագանիների կողմից վերանայվել են իրենց բյուջեները և հաստատվել ավելի իրատեսական բյուջեներ.

- իրականացվել է համայնքային բյուջեների ամենամսյա մոնիտորինգ, որի արդյունքները քննարկվել են մարզպետների և համայնքների ղեկավարների հետ.

- համայնքային բյուջեների եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել ՀՀ ֆինանսների նախարարության և կենտրոնական գանձապետական բաժանմունքի հետ, արդյունքում նախարարությունում շահագործվում է կենտրոնական գանձապետական համակարգի «գործառնական օր « ծրագիրը, արդյունքում օրական կտրվածքով նախարարությունը տիրապետում է համայնքների եկամուտների հավաքագրման ցուցանիշներին:

- 2010 թվականից եռամսյակային կտրվածքով իրականացվում է համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրում, վերլուծություն և ամփոփում:

### **3.2 Համայնքների համար գույքահարկի և հողի հարկի համար տեղեկատվական միասնական բանկի ստեղծում**

- Հողի հարկի և գույքահարկի միասնական տեղեկատվական համակարգը տեղադրված է ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում, ինչպես նաև նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչությունում: Աշխատանքներ են տարվում համակարգի շահագործման ուղղությամբ: Ամբողջական համակարգի շահագործումը հնարավորություն կտա բարելավել համայնքային բյուջեների պլանավորման, հողի հարկի և գույքահարկի համապատասխան հաշվետվությունների ձևավորման, նախարարության կողմից իրականացվող մոնիտորինգի գործընթացները:

- 2010 թվականի ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ համայնքների և տարածաշրջանային համայնքների միությունների կողմից իրականացվող՝ հողի հարկի և գույքահարկի շտեմարանների վարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները (ծախսերը): Վերլուծության արդյունքում պարզվել է, որ շտեմարաններն ինքնուրույն սպասարկելու դեպքում համայնքի ծախսերն 2,8-ից 6,5 անգամ ավելի են, քան համայնքների միությունների կողմից սպասարկման դեպքում:

## **4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆ և ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**

### **4.1 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ տարածքային կառավարման նախարարության Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ հարաբերություններ ապահովող կարողությունների ձևավորում**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո Երևան քաղաքում տարածքային կառավարումն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջոցով: Այս գործառնության իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում քաղաքի ճանապարհների վերանորոգման, փողոցների լուսավորության, թանգարանների, այլ մշակութային օբյեկտների պահպանության և այլ ծախսերի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները (շուրջ 6.6 մլրդ. դրամ) փոխանցվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջոցով:

Միաժամանակ տարածքային կառավարման նախարարությունը իրավական հսկողություն է իրականացրել Երևանի ավագանու կողմից ընդունված թվով 120 որոշումների նկատմամբ: Հսկողության արդյունքի հիման վրա արձանագրվել են իրավական տեխնիկայի պահանջների չկատարման դեպքեր: Այդ դեպքերում առաջարկվել է ակտերն համապատասխանեցնել գործող օրենսդրության կանոններին և վերահսկվել է դրանց կատարման ընթացքը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը իր աշխատանքային ծրագրին համապատասխան ստուգումներ է իրականացրել Երևանի քաղաքապետարանում (քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության, քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված քաղաքաշինության և քանդման թույլտվությունների տրամադրման



օրինականության և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների կատարման վերաբերյալ: Հսկողություն է իրականացվում նաև ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների նկատմամբ:

## **4.2 Վարչատարածքային բարեփոխումների իրականացում**

2010 թվականի ընթացքում շարունակվել են համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի կատարելագործմանն ուղղված ուսումնասիրությունները՝ միջազգային փորձի համադրմամբ: Գերմանական Տեխնիկական Համագործակցության ընկերության (GTZ) տեխնիկական օժանդակությամբ մշակվել է ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների խոշորացման օրինակելի ծրագրի նախագիծը: Ծրագիրը մշակելիս ակնհայտ է դարձել, որ Հայեցակարգում անհրաժեշտ է ներառել որոշակի նոր չափանիշներ: Այժմ նմանատիպ նախագիծ մշակելու նպատակով համատեղ ուսումնասիրություններ են կատարվում ՀՀ Սյունիքի մարզում:

2010 թվականի ընթացքում ավարտվել է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական հատվածի հողերի՝ համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու գործընթացը:

## **4.3 Եվրոպայի խորհրդի հետ տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքի քննարկում, տեխնիկական և փորձագիտական օժանդակության ապահովում**

2010 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, «Հայաստանի համայնքների միության»-ը, այլ հասարակական կազմակերպությունների և Եվրոպայի Խորհրդի փորձագետների հետ համատեղ, մշակել է «Եվրոպայի Խորհուրդ – Հայաստանի կառավարություն» Գործողությունների Պլանի նախագիծը՝ կապված տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների հետ: Փաստաթղթի նպատակն է՝ կատարելագործել ազգային օրենսդրությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Այն կնպաստի տեղական ժողովրդավարության ամրապնդմանը, տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը և ապակենտրոնացված կառավարման խորացմանը: Փաստաթուղթը հնարավորություն կընձևեի վերը նշված բարեփոխումների իրականացման համար ներգրավել Եվրոպայի Խորհրդի և միջազգային այլ կառույցների խորհրդատվական կարողությունները:

2010 թվականի ընթացքում Եվրոպայի Խորհրդի փորձագետների, պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպվել և անց են կացվել կյոք սեղաններ, սեմինարներ և այլ քննարկումներ, կապված տեղական իշխանությունների իրավասությունների և ֆինանսական միջոցների միջև համապատասխանության, տեղական մակարդակում հանրային կառավարման արդյունավետության բարձրացման, Հայաստանում տեղական ինքնակառավարման օրենսդրական բազայի բարելավման և այլ խնդիրների հետ:

2010 թվականի ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով Եվրամիության Տարածաշրջանների Կոմիտեին փոխանցվել է Հայաստանում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ոլորտներում վերջին զարգացումների վերաբերյալ տեղեկատվությունը:

## **5. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

### **5.1 ՀՀ համայնքների անշարժ գույքի միավորների կադաստրային հատակագծերում եվ քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման միջոցառումներ**

ՀՀ մարզեր կատարած ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի այցերի ընթացքում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործառնությունների հետ առնչվող, համայնքների ղեկավարների և քաղաքացիների կողմից բարձրացրած հարցերը համալիր ուսումնասիրվել են, քննարկվել շահագրգիռ պետական մարմինների հետ, ինչի արդյունքում ՀՀ համայնքների անշարժ գույքի միավորների կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման նպատակով՝ մշակվել և հաստատվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանը:

### **5.2 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխում**

ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը, որով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք կամ ցածրարժեք հողատեսքերի փոփոխման հետ կապված գործընթացները:

### **5.3 ՀՀ համայնքներում քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող չօգտագործված գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում**

- Նախարարության կողմից 2010 թվականին իրականացվել է մոնիտորինգ ՀՀ համայնքներում քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող չօգտագործված գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ, որի արդյունքում պարզվել է, որ 2010թ հունվարի 1-ի դրությամբ մարզերի և համայնքների վարչական սահմաններում քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 451741.3 հա հողատեսքերից չօգտագործվող է համարվում 57335.4 հա, որը կազմում է 12.7%: Աշխատանքները պետք է շարունակվեն 2011 թվականին:

### **5.4 ՀՀ կառավարության 31.12.1998թ N 867-Ն որոշմամբ հաստատված առաջին պետական գրանցման ժամկետների երկարացում**

2010թ հունիսի 17-ի N 753-Ն որոշմամբ փոփոխություն կատարվեց ՀՀ կառավարության 31.12.1998թ N 867 որոշման մեջ, համաձայն որի պետական գրանցման նոր համակարգում կադաստրային քարտեզագրումն ավարտված համայնքներում հավաստագրի տրամադրումից հետո քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակելի նշանակության անշարժ գույքի (բացառությամբ առանձին միավոր հանդիսացող ավտոտնակների) և գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները կատարվում են անվճար, առանց ժամկետի սահմանափակման:

### **5.5 Համայնքներում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից գյուղատնտեսական նշանակության հողերից հրաժարվելու դեպքեր**

ՀՀ քաղաքացիների կողմից գյուղատնտեսական նշանակության հողերից հրաժարվելու դեպքերում հետագա իրականացվող քայլերը և դրանց ամբողջ իրավական շղթան ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորների և ԿԱԱԳԿՊԿ-ի ներկայացուցիչների հետ համատեղ և ՀՀ մարզպետների միջոցով առաջարկվել է ՀՀ համայնքների ղեկավարներին առաջնորդվել լիազոր մարմինների կողմից ներկայացված պարզաբանումներով՝ գյուղատնտեսական նշանակության հողերից հրաժարվելու և հողերի ՀՀ-ից բացակա սեփականատերերին պատշաճ ծանուցման հետ կապված խնդիրների վերաբերյալ:

Հողի սեփականատիրոջ/տերերի կողմից գյուղատնտեսական հողի սեփականության իրավունքից հրաժարվելու դեպքում /հրաժարվողը դիմում է համայնքի ղեկավարին, վերջինս դիմում է համայնքի ավագանուն, որը կայացնում է որոշում հողամասը վերցնելու և համայնքային սեփականությունը ճանաչելու մասին/ որպես համայնքային սեփականություն գրանցելու համար անհրաժեշտ վճարներն ու տուրքերը կազմում են ութ հազար /8000/դրամ, որից 1000դրամը գրասենյակային աշխատանքների համար, 2000դրամը գրանցման վճար և 5000 պետական տուրք:

Հողի սեփականատիրոջ/տերերի կողմից գյուղատնտեսական հողի սեփականության իրավունքը հոգուտ համայնքի դադարեցնելը հողերի նվիրատվության պայմանագրերի կնքման միջոցով իրականացնելու դեպքում, որպես համայնքին կատարված նվիրատվություն կիրառվում է օրենքով սահմանված արտոնություն 5000դրամ պետական տուրքի վճարումից : Գործարքը ձևակերպվում է նոտարի կողմից, որի համար գանձվում է ծառայության վճար 500դրամ:

Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ օրենքով սահմանված կարգով հողի սեփականատիրոջ/տերերի կողմից գյուղատնտեսական հողի սեփականության իրավունքը հոգուտ համայնքի դադարեցնելու դեպքում (իրականացվում է դատարանի միջոցով) և որպես համայնքային սեփականություն գրանցելու համար անհրաժեշտ վճարներն ու տուրքերը կազմում են տասներկու հազար /12000/դրամ, որից 1000դրամը գրասենյակային աշխատանքների համար, 2000 դրամը գրանցման վճար, 5000 պետական տուրք և 4000դրամ դատարան տրվող վճար:

### **5.6 ՀՀ համայնքներում առաջին քարտեզագրման ժամանակ հողերի նպատակային նշանակությունը սխալ քարտեզագրված գործերի վերաբերյալ**

ՀՀ համայնքներում առաջին քատեզագրման ժամանակ հողերի նպատակային նշանակությունը սխալ քարտեզագրված հողատարածքները, որոնց վերաբերյալ առկա են նախկին իրավական հիմքերը, համաձայն ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի կողմից ընդունված հրամանի՝ իրականացվելու է Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնությամբ, կազմվելով համապատասխան արձանագրություն:

### **5.7 ՀՀ համայնքներում արոտների և խոտհարքների օգտագործելիության աստիճանի և կառավարման արդյունավետության բարձրացում**

ՀՀ համայնքներում արոտների օգտագործելիության աստիճանի և կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով դյուրացվել է արոտները վարձակալության հանձնելու գործընթացը, ինչի արդյունքում նաև հանվել է վարձակալության իրավունքի ձևակերպման հետ կապված էական ծախսեր կատարելու անհրաժեշտությունը:

### **5.8 Հայաստանի Հանրապետությունում այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները կանոնակարգելու մասին**

Հայաստանի Հանրապետությունում այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները կանոնակարգելու նպատակով մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2010թ սեպտեմբերի 9-ին ընդունվել է N 1129-Ն որոշումը, համաձայն որի՝ հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված և ներկայումս ըստ հողային հաշվեկշռի բնակավայրերի նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների գրանցման համար հիմք է հանդիսանում մինչև 1994 թվականի հունվարի 1-ը տրամադրված այգեգործի գրքույկը: Վերջինիս առկայության դեպքում հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված և ներկայումս համայնքին սեփականության իրավունքով փոխանցված՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ դատական կարգով քաղաքացիների սեփականությունը ճանաչվելու դեպքում սույն որոշման ուժով տվյալ հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված՝ բնակավայրերի հողերի, որի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով տրամադրվում է հողամասի գլխավոր հատակագիծ:

### **5.9 ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկման (բաշխման) աշխատանքները**

- ՀՀ վարչապետի 07.02.05թ. N67-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ մարզերի և համայնքների վարչական սահմանների նկարագրման աշխատանքների կարգավորման կառավարական հանձնաժողովի 2008-2009թթ. կատարված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ավարտվել են համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկման (բաշխման) աշխատանքները: (Աշխատանքներն իրականացվել են ՀՀ կառավարության 27.10.05թ. N1873 որոշմամբ հաստատված հայեցակարգին համապատասխան:)

- Մշակվել են «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը, որոնք սահմանված կարգով ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից:

- Արդյունքում ՀՀ համայնքների վարչական սահմաններում են ընդգրկվել նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզի վարչական սահմաններում գտնվող պետական պահուստի հողերը և այժմ տեղական ինքնակառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, բացառությամբ Սևանա լճի:

Հաշվի առնելով վերոգրյալը մշակվել և 2010թ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը

### **5.10 Արարատյան դաշտավայրի խորքային հորերի և դրենաժային համակարգի օգտագործման արդյունավետության բարձրացմանը ուղղված միջոցառումների իրականացում**

Արարատյան դաշտավայրի ստորերկրյա խորքային (այդ թվում՝ ինքնաշատրվանոց) հորերի արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի ղեկավարությամբ:

Արարատյան դաշտավայրի ստորերկրյա խորքային հորերի արդյունավետ շահագործման կազմակերպման նպատակով կայացել է միջգերատեսչական հանձնաժողովի ավելի քան 10 նիստ:

Արարատյան դաշտավայրի գյուղատնտեսական նշանակության հողերը աղակալման և ջրով ոռոգվելու հետևանքներից խուսափելու համար 2010 թվականին Հազարամյակների մարտահրավերներ ծրագրի շրջանակներում մեկնարկել է Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի՝ մայր և 2-րդ կարգի կոլեկտորների մաքրման ծրագիրը մոտ 17 մլն ԱՄՆ դոլարի համարժեք դրամի չափով:

Ծրագիրը ավարտվելու է 2011 թվականին, որի արդյունքում իրականացվելու է 2,6 մլն. խոր. մետր հողային աշխատանքներ կամ մոտ 450 կմ մայր և 2-րդ կարգի կոլեկտորների ու դրենաժների մաքրում:

## 6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2010թ. ընթացքում ՏԿ նախարարություն ստացվել, մշակվել է «Mulberri» համակարգի միջոցով գրանցվել է 17 329 մտից փաստաթուղթ, միաժամանակ էլից է եղել 7760 գրություն: 2010թ. ընթացքում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գեւորգյանի 2008թ. հրամանով հաստատված «ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգի» համաձայն՝ իրականացվել է 12 ընդունելություն, որին մասնակցել է 62 քաղաքացի:

## 7. ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում 2010թ.-ի առաջին իսկ օրերից աշխատանքներն ուղղված են եղել «ՄԴԾ աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի» ստեղծմանը և այդ գործընթացն իրականացվել է այն հաշվով, որ Միգրացիոն գործակալությունից անցումը Միգրացիոն պետական ծառայությանը ընթանա սահուն՝ չխախտելով աշխատանքների բնականոն ընթացքը: Ծառայությունը փաստացի սկսել է գործել 2010թ.-ի ապրիլից, երբ համալրվեց աշխատակազմը և ներդրվեց քաղաքացիական ծառայության համակարգը: Ծառայությունը բաղկացած է 6 բաժիններից և 35 աշխատակիցներից, որոնցից 26-ը քաղաքացիական ծառայողներ են:

Հաշվետու ժամանակաշրջանում ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Մշակվել և 2010թ.-ի դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը»:

Մշակվել և ընդունվել են «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 4 որոշումներ և այդ որոշումներից բխող 3 գերատեսչական նորմատիվ ակտեր:

Մշակվել է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:

Վավերացվել են 3 միջազգային պայմանագրեր:

Ստորագրվել են ևս 3 ռեադմիսիոն համաձայնագրեր, իսկ 5 պետությունների հետ բանակցություններն ընթացքի մեջ են:

Աշխատանքներ են տարվել աշխատանքային միգրացիայի հարցերով 2 նոր համաձայնագրերի /Կատարի պետության և Ֆրանսիայի հետ / կնքման ուղղությամբ:

Միգրացիայի հարցերով զբաղվող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների աշխատակիցներին «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ նոր օրենքի պահանջներին իրազեկման նպատակով կազմակերպվել են կլոր սեղաններ, սեմինար խորհրդակցություններ:

Մշակվել է ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստականների համար նախատեսված տեղեկատվական գրքույկ, որը հրատարակվելու է 4 լեզուներով:

Ապաստան ստանալու հայցով դիմել են 50 օտարերկրյա քաղաքացիներ, որոնցից փախստական են ճանաչվել և ապաստան են ստացել 14-ը, մերժվել են 23-ը, 5 դիմումի քննարկումը կասեցվել է, քննարկման փուլում է 8 դիմում: Վերջնական մերժում ստացած 6 անձանց ՀՀ-ից արտաքսման համար տեղյակ է պահվել ՀՀ ոստիկանությանը:

Ապաստանի հայց են ներկայացրել հիմնականում Իրաքից, Իրանից, Կոտ դ'իվուարից և Թուրքիայից:

Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ստանալու համար դիմել է 1173 անձ, որոնց գործերին տրվել է համապատասխան ընթացք:

Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային բաժիններից ստացված տեղեկատվության, 2010թ.-ին թվով 284 փախստականներ ստացել են ՀՀ քաղաքացիություն: Մինչ այժմ ՀՀ քաղաքացիություն ստացած փախստականների թիվը կազմում է 82884 անձ :

ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 23-ի «1988-1992թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց ապահովագրական ստաժը սահմանող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» 2009թ. հուլիսի 23-ի թիվ 907-Ն որոշման համաձայն հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային ստաժի հաստատման համար դիմել է 199 անձ, կայացել է հանձնաժողովի 15 նիստ, որից 4-ը արտագնա. մեկը՝ Սյունիքի մարզում, երեքը՝ Տավուշի: Դիմողներից 84-ի գործով կայացվել է որոշում ապահովագրական ստաժը սահմանելու մասին:

2010թ. ընթացքում հանրակացարան տրամադրելու խնդրանքով ստացվել է 264 դիմում, որոնց վերաբերյալ տեղում կատարվել են բնակկենցաղային պայմանների ուսումնասիրություններ, որից հետո հարցը ներկայացվել է ՀՀ ՏԿՆ-ում՝ փախստականներին ժամանակավոր կացարաններում տեղավորելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում և քննության արդյունքում 50 փախստական ընտանիքների հասկացվել են հանրակացարանային սենյակներ:

Իրականացվել է ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-ն որոշմամբ հաստատված՝ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագրում ընդգրկված հավակնորդ շահառուների թվաքանակի ճշգրտման աշխատանքներ: Այսօրվա դրությամբ դեռևս չի լուծվել առաջնահերթ ծրագրում ընդգրկված 1169 փախստական ընտանիքի բնակարանային ապահովության հարցը, որից 860 –ը բնակվում են Երևանում, իսկ 309 –ը՝ մարզերում:

2011թ.-ի ապրիլ ամսին Երևանում նախատեսվում է կազմակերպել միջազգային դոնոր կազմակերպությունների համաժողով՝ առաջնահերթ ծրագրում ընդգրկված փախստականների բնակապահովության խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով:

Թայբքս գործիքի միջոցով 2010թ.-ի մայիսի 20-ին Երևանում կազմակերպվել է «Աշխատանքային միգրացիայի կառավարման ԵՄ փորձի վերաբերյալ» թեմայով աշխատաժողով:

2010թ. հունիսի 9-ին Թվինինգ ծրագրերի իրականացման խորհրդի 3-րդ նիստում հավանության արժանացավ ՄՊԾ-ի «Միգրացիայի և ապաստանի կառավարման համակարգի բարելավումը՝ Միգրացիոն պետական ծառայության ինստիտուցիոնալ ամրապնդման միջոցով» Թվինինգ ծրագրային առաջարկը: 2010թ.-ի սեպտեմբերին և նոյեմբերին ԵՄ փորձագետների առաջին և երկրորդ առաքելությունների ընթացքում նրանց հետ համատեղ մշակվեց ծրագրային առաջարկի նկարագիրը (Twinning Project Fiche): Փորձագետների 2-րդ առաքելության ընթացքում նաև կազմակերպվեց աշխատաժողով՝ տարբեր շահագրգիռ կառույցներին Թվինինգ ծրագրային առաջարկը ներկայացնելու և նրանց իրազեկելու նպատակով: Ներկայումս Թվինինգ ծրագրային առաջարկի վերջնական տարբերակը ուղարկվել է Բրյուսել Եվրամիության հանձնաժողովի հաստատմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ծառայությունում ստացվել է 2177 դիմում: Վերադաս մարմիններից ստացվել է 455 հանձնարարական: Նշված բոլոր դիմումներին և հանձնարարականներին սահմանված կարգով և ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

Ծառայության գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է ԶԼՄ-ներով: Կազմակերպվել են հեռուստա և ռադիո հաղորդումներ, հրապարակվել են հոդվածներ տարբեր օրաթերթերում և շաբաթաթերթերում:

## 8. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Հայաստանի Հանրապետության արխիվային գործի զարգացման 2010թ. ծրագրային առաջադրանքներին համապատասխան հաշվետու տարում իրականացվել են նպատակային աշխատանքներ՝ ըստ ոլորտի գործունեության ներքոհիշյալ հիմնական ուղղություններին:

Արխիվում պանությունում գտնվող արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով 2010թ. ընթացքում վերականգնվել-վերանորոգվել է 323.203 թերթ արխիվային փաստաթուղթ և կարվել-կազմապատվել՝ 30.485, արկղավորվել՝ 53.620, կապոցավորվել՝ 86.593 արխիվային գործ, հիշյալ ուղղությամբ ծրագրային ցուցանիշներն իրագործվել են 10-15 % գերակատարումներով:

Ըստ արխիվի հաշվառման հիմնական փաստաթղթերի ամփոփ տվյալների՝ 2011թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի ազգային արխիվում պահպանվում են 6.699 արխիվային ֆոնդ՝ 3.522.506 արխիվային գործով, 310.406 պ.մ. արխիվային կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, 12.263.227 կադր ապահովագրական ֆոնդի միկրոպատճեն և 6.728 միկրոֆիշ, այսինքն՝ 2010թ. հունվարի 1-ի ցուցանիշների համեմատությամբ արխիվում պահպանության ներքո գտնվող արխիվային ֆոնդերի թվաքանակն ավելացել է 118-ով, արխիվային գործերի ծավալը՝ 67.106-ով:

Նախատեսված 306.397 թերթի փոխարեն գիտատեխնիկական մշակման է ենթարկվել չկարգավորված վիճակում արխիվ պահպանության ընդունված 385.495 թերթ անձնական ծագման ու 3.350-ի դիմաց՝ 6.001 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ: Ընդ որում՝ անձնական ծագման 385.495թերթ ցրոն փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման արդյունքում ծրագրված 3.600-ի փոխարեն ձևավորվել, նկարագրվել և ցուցակագրվել է 3.406 մշտական պահպանության գործ:

Տվյալների էլեկտրոնային շտեմարանի ձևավորման նպատակով ծրագրավորված 41.605-ի փոխարեն 2010թ. կազմվել է 42.419 արխիվային թղթե կրիչով ու կինոֆոտոֆոնո փաստաթղթերի համակարգչային քարտ և 73.160-ի փոխարեն համակարգիչ մուտքագրվել՝ 68.460 քարտային տեղեկատվություն: Բացի այդ, արխիվում իրականացվել է 1.297 էջ (ծրագրով՝ 560) արխիվային գործերի ցուցակների համակարգիչ մուտքագրում՝ դրանց թվային տարբերակների ստեղծման նպատակով և 55.800 էջի պատճենահանում (փաստաթղթեր, չափորոշիչներ, ձևեր և այլն):

Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը. հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանի ազգային արխիվ» ծրագրի համար կատարվել է 10.406, իսկ օգտվողների և հարցումների պատասխանման համար՝ 2.077 էջ թղթե կրիչով արխիվային փաստաթղթերի, 1.258 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթղթերի թվայնացում:

Արխիվի համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից պահպանության է ընդունվել 41.711 գործավարական ու 32.066 անձնակազմին վերաբերող գործ (միասին՝ 73.777) և անմշակ վիճակում 134.241 թերթ անձնական ծագման ու 3.601 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ՝ տարեկան առաջադրանքներն իրագործվել են համապատասխանաբար 147,0, 161,7 և 107,5%-ով:

Հաշվետու ժամանակաընթացքում արխիվի մեթոդական-փորձագիտական և մարզային մասնաճյուղերի փորձագիտական հանձնաժողովները (ՄՓՀ, ՓՀ) իրենց նիստերում քննարկել և հաստատել են 7.664 մշտական պահպանության գործերի ցուցակներ և հավանություն տվել 32.546 անձնակազմին վերաբերող ու 1.969 երկարաժամկետ պահպանության գործերի և 134.241 թերթ անձնական ծագման (նախնական) փաստաթղթերի նորակազմ ցուցակների:

Հաշվետու ժամանակամիջոցում պատասխանվել է քաղաքացիներից ու տարբեր կազմակերպություններից ստացված, այդ թվում՝ արտասահմանից, 110 թեմատիկ և 25.076 սոցիալ-իրավական բնույթի հարցում, որը ավել է 2010թ. ծրագրից 3.937-ով (կատարողականը՝ 118,5%), որոնցից դրական է պատասխանվել 20.898-ին, կամ հարցումների ավելի քան 83 տոկոսին, բացասական պատասխանի հիմնական պատճառը համապատասխան փաստաթղթերի բացակայությունն է, այդպիսի դեպքերում խորհուրդ է տրվում դիմումատուին դիմելու այն վայրը, որտեղ պահպանվում են փաստաթղթերը, կամ փաստաթղթերի կորստի դեպքում հարցը լուծել դատական կարգով: Վճարովի հարցումների քանակը կազմում է 6744, կամ հարցումների մոտ 27 տոկոսը:

2010թ. արխիվն ունեցել է 418 օգտվող (ուսումնասիրող), որոնց արխիվապահոցներից օգտագործման են տրամադրվել 26.769 արխիվային գործ, գծագիր, բյուքս, թերթի լրակազմ, պարբերական և այլն): Արխիվի ցուցասրահում և տարածքային ստորաբաժանումներում կազմակերպվել ու անցկացվել է արխիվային փաստաթղթերի 7 թեմատիկ ցուցահանդես-ցուցադրություն (այդ թվում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 65, Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցներին, Հայոց պետականության կայացմանը և այլ հիշարժան իրադարձությունների) և ուսանողների ու աշակերտների համար 17 էքսկուրսիա:

Լույս են ընծայվել «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 2010թ. հերթական (2) համարները, ինչպես նաև Հայաստանի ազգային արխիվի գործուն մասնակցությամբ պատրաստվել և հրատարակվել են «Հայաստանը և խորհրդայնության հարաբերությունները 1945-1946թթ. դիվանագիտական փաստաթղթերում», «Հայկական պատմագրության կարծրատիպերը», «Աստվածատուր Խաչատրյանի Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները» գրքերը և արխիվային փաստաթղթերի ժողովածուները:

2010թ. պետբյուջեից ստացած սուբսիդիաները կազմել են 333081.8 հազար դրամ, որը ծախսվել է համաձայն նախահաշվի, այդ թվում 213649.0 հազար դրամ աշխատավարձ, 54701.3 հազար դրամ պարտադիր սոցվճարներ, 50804.2 հազար դրամ՝ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, 13305.7 հազար դրամ՝ հարկեր: 2010թ. ստացված 79309.0 հազար դրամ կապիտալ տրանսֆերտների շրջանակներում արխիվի գլխավոր մասնաշենքի արխիվապահոցների տեխնիկական հարկերը վերակառուցվել են արխիվապահոցների, տեղադրվել են շարժական դարակաշարեր, որը հնարավորություն կտա առաջիկա 10 տարիներին լուծել արխիվի համալրման խնդիրները, արխիվի կուտակած շահույթի հաշվին՝ ավելի քան 26 միլիոն դրամ, արխիվի 2-րդ մասնաշենքի արխիվապահոցներում տեղադրվել է օդաորակման նոր համակարգ, որով ապահովվել է փաստաթղթերի անվտանգ պահպանումը, նորոգվել է Նոյեմբերյանի տարածքային ներկայացուցչության զբաղեցրած տարածքը: